ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ. 17

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

Հայրապետական ջերմագին ողջույն համազգային ժողովի ազնիվ պատգամավորներիդ, որ եկել եք հայրենադարձի ու ազգահավաքման նվիրական գաղափարը կենսագործելու:

Հայրապետական օրհնություն ազգի հավատարիմ զավակներիդ, որ եկել եք լսելի անելու աշխարհին հայ ժողովրդի միահամուռ կամքն ու արդար պահանջը՝ վերատիրանալու իր բռնազրավուած հայրենի հողերին:

Մաղթում ենք Ամենակալին, որ զորացնե ազնիվ պատգամավորներիդ ի կատար ածելու Ձեր սրբազան պարտականությունը, վառ ու անշեջ պահելու հայրենահավաքի ու հայրենադարձի մեծ գաղափարը եվ ապահովելու նորա տնտեսական, քաղաքական ու բարոյական բոլոր կողմանները:

Մաղթում ենք Բարձրյալին, որ Նա հաջողե ազգի հավատարիմ զավակներիդ հայի արդար դատի պաշտպանության նվիրական ուղին հարթելու եվ հաղթանակով պսակելու:

Թող Ցերը հովանավորե եվ հաջողե ներկա բախտորոշ մոմենտին հայ ժողովրդի մեծ ձեռնարկն ու արդար դատը:

Հայրապետական կոնդակ ուղարկված է: Մեր միակ ներկայացուցիչները մնում են Գերաշնորհ Տիրան Եպիսկոպոս Ներսոյանը եվ Գերաշնորհ Մամբրե Արքեպիսկոպոս Գալֆայանը, որ կարդալով մեր հեռագիրը՝ թարգման կհանդիսանան Մեր զգացմունքների ու գաղափարների: Հոգվով ցավում ենք, որ անկարող եղանք մյուս երկու աշխարհիկ պատգամավորներին ժամանակին ուղարկելու:

ԳԵՎՈՐԳ Զ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

30 ապրիլ 1947 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ